01/10.1/2860-10
2010-03-24

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

պարոն ՀՈՎԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Աբրահամյան

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարության եզրակացությունը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավոր Վիկտոր Դալլաքյանի՝ օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացրած «Գույքահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ։

Ներկայացված օրենքի նախագիծը չի բխում Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի ապրիլի 28-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի մասին» N 380-Ա որոշմամբ հաստատված՝ Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի 4.3.5-րդ բաժնի «գ» ենթակետի պահանջներից, որոնց համաձայն՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որդեգրել է արտոնությունների առավելագույն կրճատման, առանձին ոլորտների, գործունեության առանձին տեսակների, առանձին ձեռնարկությունների

համար որևէ բնույթի հարկային արտոնությունների բացառման քաղաքականությունը։ Գտնում ենք, որ այն կարող է դառնալ նախադեպային՝ ոչ պակաս կարևոր այլ ոլորտների համար։

Բացի դրանից՝ օրինագծի ընդունման դեպքում կնվազեն համայնքների եկամուտները, իսկ նախագծով չի սահմանվում փոխհատուցման վերաբերյալ դրույթ, ինչը հակասում է «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածին, որի համաձայն «Պետությունն իր ընդունած օրենքներով չի կարող ավելացնել համայնքի պարտադիր լիազորությունները կամ նվազեցնել եկամուտները՝ առանց համապատասխան ֆինանսական փոխհատուցման»։

Հայտնում ենք, որ, համաձայն ներկայացված հիմնավորման, ստեղծագործական արվեստանոցների գույքահարկի հաշվարկները կատարվել են միայն Հայաստանի նկարիչների միության կողմից տրամադրված տեղեկատվության հիման վրա և հաշվարկներում ներառված չեն մյուս ստեղծագործական արվեստանոցների (ճարտարապետների, քանդակագործների և այլն) գույքահարկի գումարները։

Ելնելով շարադրվածից՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը դեմ է ներկայացված օրենքի նախագծի ընդունմանը։

Միաժամանակ հայտնում ենք, որ, ներկայացված օրենքի նախագիծը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում քննարկելիս, հարակից զեկուցմամբ հանդես կգա Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարի առաջին տեղակալ Վաչե Տերտերյանը։

Հարգանքով՝

ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

Նախագիծ
Պ-833-19.02.2010-ՏՀ-010/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«Գույքահարկի մասինե Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին

Հոդված 1. «Գույքահարկի մասինե Հայաստանի Հանրապետության 2002 թվականի դեկտեմբերի 26-ի թիվ ՀՕ-491-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 15-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր 7-րդ կետով «7) ստեղծագործական արվեստանոցներրե։

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2011 թվականի հունվարի 1-ից։

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ՄԱՍԻՆԵ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆԵ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ

Հայաստանի նկարիչների միության նախագահի տրամադրած տեղեկանքների համաձայն ներկայումս Երեւանում կա այդ միության անդամների 106 ստեղծագործական արվեստանոց, իսկ մարզերում դրանց թիվը տատանվում է 10-20-ի սահմաններում։ Ըստ վերոհիշյալ տեղեկանքի այդ ստեղծագործական արվեստանոցներից գանձվող գույքահարկի ողջ գումարը տարեկան կտրվածքով կազմում է, 5.430.439 (հինգ միլիոն չորս հարյուր երեսուն հազար չորս հարյուր երեսունինը) դրամ, իսկ բնակարանային այն կկազմեր 1.186.080 (մեկ միլիոն հարյուր ութսունվեց հազար ութսուն) դրամ։ Ցավոք, Հայաստանում ստեղծագործական արվեստանոցները դիտվում են նույն կարգավիճակում, ինչպես ռեստորանները, խաղատները, խանութները եւ այլն։

Սույն օրենսդրական նախաձեռնության ընդունումը պայմանավորված է ստեղծագործողներին պետականորեն աջակցելու անհրաժեշտությամբ։